

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(2018-2023)

Բանալի բառեր՝ պետական (ազգային) մատենագիտություն, հանձնարարական մատենագիտություն, անհատական մատենագիտություն, ընթացիկ և հետադարձ մատենագիտություն, գրանցային մատենագիտություն, մեթոդական նյութեր, օժանդակ ցանկեր, բնաբան, մատենաշար, թվածին գիրք:

Keywords: state (national) bibliography, recommendation bibliography, individual bibliography, current and retrospective bibliography, register bibliography, methodical materials, auxiliary lists, epigraph, series of books/publications, e-born book.

Յուրաքանչյուր գիտական հետազոտություն սկսվում է տպագիր, ձեռագիր, էլեկտրոնային հրատարակչական միավորների ընտրությունից և գրականության ցանկերի կազմման նախապատրաստական աշխատանքներից: Գրականության ցանկի ճիշտ ընտրությունից է կախված հետազոտողի առջև դրված խնդիրների սահմանումը, մեթոդաբանությունը, ակնկալվող արդյունքների արժանահավաստությունը, չափելիությունը: Գրականության ցանկերը պատրաստելիս հետազոտողները օգտվում են ոչ միայն ավանդական քարտային գրացուցակներից, այլև ներկայում հասանելիության լայն աշխարհագրություն ապահովող էլեկտրոնային գրացուցակներից, քարտարաններից, առանձին թվային պահոցներից: Այդպիսի հնարավորություններ են ընձեռում Հայաստանի գրադարանների համահավաք, Հայ գիրք, Հայ մամուլ համահավաք գրացուցակները (սրանք որոշ առումով նաև առցանց գրադարաններ են), լրիվ տեքստային շտեմարանները, ՀԱԳ թվային պահոցը և այլն:

ՀԱԳ հրատարակչական գործունեությունը, որի սկիզբը դրվել է 1937 թվականին, ծավալվել է մի քանի ուղղություններով: Հոդվածում ներկայացնում ենք վերջին հինգ տարիների ՀԱԳ հրատարակությունների համապատկերը:

Գրադարանի հրատարակչական գործունեության գերակա ուղղությունը մատենագիտությունն է: Կարող ենք արձանագրել, որ ՀԱԳ-ում անցած 85 տարիների ընթացքում կազմվել են խորհրդային մատենագիտական դպրոցում արձանագրված հիմնական տեսակի մատենագիտական ժողովածուներ՝ ընդհանուր, պետական (ազգային), հանձնարարական, ոլորտային (բնագավառային), թեմատիկ, երկրագիտական (տարածաշրջանային), անհատական, ընթացիկ և հետադարձ, գրանցային, մատենագիտությունների մատենագիտություն [Справочник библиографа, 2005, 25]: Պետական մատենագիտության կազմման աղբյուրը պետության ներսում հրատարակվող տպագիր փաստաթղթի պարտադիր օրինակն է: 2017 թվականից ՀԱԳ-ին են փոխանցվել Ազգային գրապալատի գործառնությունները, այդ թվում՝ պետական, ընթացիկ և հետադարձ մատենագիտությունների կազմման աշխատանքները: Ընթացիկ մատենագիտությունը նոր լույս տեսած գրականության մատենագիտությունն է՝ ընթացիկ ժամանակահատվածի որոշակի կտրվածքով, օրինակ, ամենամսյա տվյալներով: Մատենագիտության այս տեսակի օրինակն է «Հայ տպագրության տարեգիրքը». պարբերաբար հրատարակվում են տարեգրքի համարները, իսկ հետադարձ մատենագիտության ժողովածուի օրինակ է «Գիրքը Հայաստանի Հանրապետությունում»: 2011-2020 հատորի աշխատանքները նյութերի հավաքման և կազմման փուլում են գտնվում:

Պետք է նկատել, որ թեև մատենագիտությունը առանձին գիտություն չի համարվում, այնուամենայնիվ, այն ևս որոշակի գիտելիքներ և հմտություն, իմացությունների և սկզբունքներ

րի ամբողջությունն պահանջող ասպարեզ է, որի մեջ չպետք է մտնեն նրան ոչ լավատեղյակ մարդիկ [Տէր Վարդանեան, 2019, 222]:

1988 թվականից ՀԱԳ-ը հատոր առ հատոր հրատարակում է հայերեն տպագիր գրքի ընդհանուր կամ ընդհանրական հետադարձ մատենագիտությունը [Հայ գիրքը 1512-1800 թվականներին, 1988; Հայ գիրքը 1801-1850 թվականներին, 1967; Հայ գիրքը 1851-1900 թվականներին, 1999; Հայ գիրքը 1901-1920 թվականներին, 2007; Հայ գիրքը 1921-1930 թվականներին, 2012]: Հայ գրատպության համատեքստում կարևորվում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրացուցակները կամ մատենագիտությունները, որոնք պատկերացում են տալիս հայկական գրատպության անցած ճանապարհի մասին [Զարգարյան, 2017, 461]: 2018 թ. հրատարակվել է այդ մատենագիտության 6-րդ հատորը [Հայ գիրքը 1931-1940 թվականներին, 2018]: Հատորը ունի ժամանակագրական-այբբենական կառուցվածք, այսինքն՝ նյութերը դասավորված են յուրաքանչյուր տարվա մեջ հեղինակի ազգանուն-անվան կամ գրքի խորագրի այբբենական կարգով: Ապահովված է Հայ գրքի մատենագիտության նախորդ հրատարակությունների շարունակականությունը թե՛ բովանդակային և թե՛ ձևական առումով: Հատորը կազմված է 1931-1940 թթ. ընդգրկող բուն մատենագիտությունից և օժանդակ ցանկերից: Գրքերի նկարագրությունը կատարված է տիտղոսաթերթի տվյալների հիման վրա՝ պահպանելով բնագրի ուղղագրությունը: Երբեմն մատենագիտական որոշ տեղեկությունների աղբյուր կարող են լինել նաև գրքի կազմը, տիտղոսաթերթի դարձերեսը, վերջնաէջը: Նման դեպքում նշումներ են արվում ծանոթագրություններում: Տպագրության վայրը և գրառման մյուս մասերը տրվում են ժամանակակից ուղղագրությամբ: Մատենագիտական հրատարակությունների պարտադիր բաղադրիչ են օժանդակ ցանկերը, որոնք հնարավորություն են տալիս տարբեր որոնիչներով փնտրումներ կատարել և գտնել անհրաժեշտ գրքի գրառումը: Այս հրատարակության մեջ առկա են հապավումների, անձնանունների, վերնագրերի, տպագրավայրերի և տպարանների, առարկայական, մատենաշարերի, օգտագործված գրականության ցանկերը: Բացի աշխարհի տարբեր տպագրավայրերում լույս տեսած հայերեն գրքերի մատենագիտական ամբողջական պատկերը ներկայացնելուց՝ այս ժողովածուն նաև վիճակագրական տվյալների արտածման հնարավորություն է տալիս: Այսպես, տպագրավայրերի ցանկը երևան է բերում տվյալ ժամանակահատվածում առավել ակտիվ տպագրավայրերը, մյուս՝ մատենաշարերի ցանկը ցույց է տալիս այս կամ այն մատենաշարով հրատարակված գրքերի համեմատելի քանակները: Մատենաշարերը հետաքրքիր կերպով արտացոլում են հասարակության կրթամշակութային դաստիարակության, տնտեսության ճյուղերի գրագետ կառավարման, պետական գաղափարախոսության տարածման ուղղությամբ պետական քաղաքականության միտումները: Այսպես, 1931-1940 թթ. պետությունը միջոցներ էր գործադրում ժողովրդի կրթական մակարդակի բարձրացման, գրագիտության տարածման, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ուղղությամբ: Դրա արտահայտությունն է այն, որ մեծ տպաքանակներով հրատարակվում են և մյուս մատենաշարերից առանձնանում են «Դպրոցական գրադարան», «Մանկական գրադարան», «Հեռակա ուսուցման գրադարան», «Գյուղատնտեսական հանրամատչելի գրադարան» և այլ մատենաշարեր: Պետք է նկատել, որ «Հայ գիրքը 1931-1940 թթ.» մատենագիտության ժամանակային ընդգրկումը համընկնում է խորհրդային գրաքննության մամլիչի բուռն գործունեության տարիներին, երբ գրքերի մատենագիտական որոշ տվյալներ, գերազանցապես բռնադատված հեղինակների, խմբագիրների, ձևավորող նկարիչների և այլոց անուններ, հայտնվել են խորհրդային գրաքննության խոշորացույցի տակ: Թանձր թանաքով են ծածկվել գրողներ Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Վաղարշակ Նորենցի, Վահրամ Ալազանի, ձևավորող-նկարիչ Տաճատ Խաչվանքյանի անունները: Հատորը կազմող մատենագետները համադրել են ոչ միայն Հայաստանի ազգային, այլև մյուս գրադարաններում առկա օրինակները, ուսումնասիրել են Ազգային գրապալատի հրատարակած տպագիր գրացուցակները և կատարել ճշգրտում-

ներ ու խմբագրումներ [Գիրքը Սովետական Հայաստանում, 1988; Տպագրության տարեգիր, 1925]: Հայ գրքի մատենագիտության հատորները յուրօրինակ մատենագիտական-հանրագիտական բնույթի հրատարակություններ են, որոնք առավել մեծ աշխարհագրական ընդգրկում ունեն և նպատակ ունեն ներկայացնելու աշխարհում հրատարակվող գրքերի ցանկը: Դրանք նաև ժամանակաշրջանի վավերական պատմություններն են՝ յուրօրինակ բացահայտումներով ու հետաքրքիր մեկնաբանություններով: Իհարկե, այս մատենագիտությունները ամբողջական լինել չեն կարող, քանի որ ոչ բոլոր հրատարակություններն են Հայաստանի հասնում, և հաճախ մատենագետները նրանց տպագրության մասին տեղեկություն անգամ չեն ունենում: Այս դեպքում անչափ կարևորվում են աշխարհի գրադարանների, հայկական հոգևոր-մշակութային, կրթական կենտրոններում գործող գրադարանների, մատենադարանների համահավաք գրացուցակների էլեկտրոնային տարբերակները կամ առանձին աշխարհագրական վայրերում հրատարակված գրքերի մատենագիտական ժողովածուները: Վերջինները որպես կանոն կազմվում են տվյալ տպագրավայրերում գոյություն ունեցող գրադարանային հավաքածուների հիման վրա և, վստահաբար, ներկայացնում են տվյալ տպագրավայրի գրահրատարակչական դաշտի ամբողջական պատկերը: Այդպիսի տեղային-աշխարհագրական մատենագիտական ժողովածուները կարող են նոր հրատարակությունների հայտնաբերման, նկարագրման, հայ գրքի ամբողջական-ընդհանրական մատենագիտությունների կազմման համար արժանահավատ սկզբնաղբյուրներ դառնալ: «Հրանտ Դինք» հիմնադրամի աջակցությամբ 2017-2018 թթ. Հայաստանի ազգային գրադարանի երկու աշխատակիցների աշխատանքային գործուղումը Ստամբուլի Աթաթուրքի գրադարան և նրանց ջանադիր աշխատանքը տեղում մատենագիտական բազմաթիվ բացահայտումների ուրախառիթ փաստեր արձանագրեց: Հայտնաբերվեցին գրքեր, այդ թվում՝ նաև հնատիպ գրքեր, որոնք նախորդ տարիների հայ գրքի մատենագիտությունների մեջ չէին արտացոլվել մի պարզ պատճառով. մատենագետները դրանք տեսնելու հնարավորություն չէին ունեցել: Այդ գրքերից մի քանիսի նկարագրությունները տեղ են գտել վերոնշյալ հրատարակության «Լրացումներ» բաժնում [Հայ գիրքը 1931-1940 թվականներին, 2018, 205]:

Տեղային-աշխարհագրական մատենագիտական ժողովածուները ընդհանրական մատենագիտությունների կազմման ժամանակ նաև դառնում են լրացուցիչ աղբյուրներ: Վերջին տարիներին այդպիսի կարևոր հրատարակություններ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությունների և Ստամբուլի վերոնշյալ գրադարանում պահպանվող հայերեն և հայատառ թուրքերեն գրքերի ծավալուն մատենագիտությունները [Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն, 2021; Հայ գիրքը Թուրքիայում, 2022]: Այդ երկու մատենագիտական ժողովածուների կազմման աշխատանքներում ներգրավված են եղել Հայաստանի ազգային գրադարանի մատենագետները, որոնց մասնագիտական ներուժը ևս նպաստել է այդ արժեքավոր հրատարակությունների հաջողությանն ու կայացմանը: Դրանցում ներառված վավերագրերը իրենց ընդարձակ ու մանրամասն նկարագրություններով, վստահաբար, կարող են խիստ օգտակար լինել հայ գրքի ընդհանրական մատենագիտության հետագա հատորների կազմման աշխատանքներին: Մատենագիտությունների այս տեսակները ոչ միայն շատ հարցերում փոխլրացնող են, այլև հնարավորություն են տալիս մեկը մյուսով ստուգել, նաև տեղեկացնում են տվյալ տպագրավայրում հայկական գրական-մշակութային կյանքի, ազգային խնդիրների, դրանց լուծմանն ուղղված գործողությունների մասին:

2018 թ. Հայաստանի ազգային գրադարանը հետադարձ մատենագիտության մի բացառիկ հրատարակություն իրականացրեց՝ «Նորահայտ գրքեր և պարբերականներ» [Նորահայտ գրքեր և պարբերականներ, 2018]: Հրատարակությունը կազմված է հետևյալ բաժիններից՝ Հայերեն և հայատառ թուրքերեն գրքեր (1512-1930 թթ.), Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (1512-1850 թթ.), Պարբերականներ (1794-1970 թթ.), Հայադարան, Հավելված (գրադարանների ցանկ, որոնք հայ հնատիպ գրքի մատենագիտական ժողովածուում չեն նե-

րառվել որպես պահման վայր), վերնագրերի և օգտագործված գրականության ցանկեր: Հրատարակության մեջ ներառված են մատենագիտական համահավաք ցանկերից տարբեր պատճառներով դուրս մնացած հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքեր ու պարբերականներ: Աշխատանքը շարունակական է, և տպագրության պատրաստվող երկրորդ պրակը, անշուշտ, նոր իրողությունների լուսաբանման առիթ կտա, քանի որ դիտարկումները ցույց են տալիս, որ մինչ օրս լույս տեսած մատենագիտական ժողովածուներից դուրս են մնացել գրքերի ու պարբերականների բազմաթիվ անուններ [Նորահայտ գրքեր և պարբերականներ, 2018, 5]:

Հետադարձ մատենագիտական նշանակալի մի հրատարակություն է նաև «Հայ թարգմանական գրականություն» մատենագիտության Գ հատորը [Հայ թարգմանական գրականություն, 2021]: Ժողովածուն ընդգրկում է 2011-2020 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում լույս տեսած օտար լեզուներից թարգմանված գրքերը: Այն շարունակությունն է 2013 թ. Հայաստանի ազգային գրապալատի կողմից հրատարակված նույնանուն գրքի, որը ներառում էր 1920-2010 թթ. ընթացքում լույս տեսած թարգմանական գրականությունը: Վերջինս լույս է տեսել երկու գրքով՝ գիրք Ա. (1920-1970), գիրք Բ. (1971-2010): Քանի որ այս ժողովածուն համարվում է նախորդի տրամաբանական շարունակությունը, խմբագրական խորհուրդը որոշեց այն անվանել գիրք Գ (2011-2020): Նշված տարիներին կատարված թարգմանությունների նկարագրությունները դասավորված են ըստ գիտության բնագավառների: Օժանդակ ցանկերը բացահայտում են թարգմանական գրականության հրատարակությունների աշխարհագրական լայն ընդգրկումը, տպարանները, հեղինակների և թարգմանիչների անձնանունները: Այս հրատարակությունները թույլ են տալիս համեմատական վերլուծություններ կատարել և արտածել տվյալներ խորհրդային և անկախության շրջանի հայերեն թարգմանությունների թեմատիկայի, առաջնահերթությունների, գաղափարախոսական ուղղությունների, ինչ տիպի գրականության և կամ որ հեղինակին նախապատվություն տալու մասին: Այսպես, եթե խորհրդային տարիներին գեղարվեստական գրականության թարգմանություններում գերակշռում են ռուս դասական և ժամանակակից գրողների և կամ այլալեզու գրողների՝ ռուսերենով միջնորդավորված թարգմանությունները, ապա անկախության շրջանում, հատկապես 2010 թվականից հետո, թարգմանությունները կատարվում են առավելապես բնագրի լեզվից: Մեկ այլ միտում ևս նկատելի է. նույն հեղինակի կամ երկլեզու ստեղծագործող գրողի գործը թարգմանում են տարբեր թարգմանիչներ: Այս ամենը արձանագրված է մատենագիտության էջերում: Սույն մատենագիտական ժողովածուն հետազոտական նախաձեռնությունների անփոխարինելի աղբյուր կարող է դառնալ: Փնտրողը անպայման գտնում է իրեն հետաքրքրող նյութը:

ՀԱԳ գիտական-հրատարակչական գործունեության մի կարևոր դրսևորում է 2019 թ. նոյեմբերին հայ մամուլի առաջնեկ «Ազդարարի» 225-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուն: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ գրադարանի գիտահետազոտական գործունեության անառարկելի փաստագրում դարձան թե՛ աշխարհագրական լայն ընդգրկում ունեցող ու հանրային մեծ արձագանք ստացած գիտաժողովը և թե՛ նրանում ներկայացված նյութերի ժողովածուի կազմումն ու հրատարակությունը [Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում, 2020]: Պատահական չէր գիտաժողովի խորագիրը. ընտանիք, հայրենիք, եկեղեցի ամուր եռամիասնությունն է ի գործ ապահովելու պետության անվտանգային խնդիրների լուծումը, երկարատև կայունությունն ու խաղաղությունը, ժամանակաշրջանի մարտահրավերներին դիմակայելու ճանապարհների նախանշումը: Գիտաժողովի զեկուցումներում ընդգծվում էր այդ բոլոր խնդիրների լուծման մեջ հայ մամուլի, գրքի, կրթության, գրադարանների անառարկելի դերն ու նշանակությունը: 42 զեկուցաբերներից 32-ի հոդվածներն են ամփոփված հրատարակության մեջ: Ժողովածուն բաղկացած է երեք մասից՝ Զեկուցումներ, Ելույթներ, Հաղորդումներ: Հոդվածները ձևավոր-

ված են ներկայացված պահանջներին համապատասխան ձևաչափերով և ունեն անգլերեն ամփոփումներ:

Իսկ 2022 թ. սեպտեմբերին Հայ գրատպության 510-ամյակին նվիրված «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» խորագրով միջազգային գիտաժողովը թե՛ միջազգային գործընկերների, արտասահմանյան ճանաչված գրադարանավարների ու գրքագետների ընդգրկվածության մեծ աշխարհագրությամբ, թե՛ թեմաների բովանդակային ծավալներով իսկապես բացառիկ էր հայկական գրադարանային գործի պատմության մեջ: 2012, 2014, 2016 թվականներին ՀԱԳ-ը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը կազմակերպեցին և անցկացրին հայկական գրադարանների համաժողովներ՝ «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով, որոնք հանրային մեծ արձագանք գտան: Համաժողովների ընթացքում բազմաթիվ բացահայտումներ եղան աշխարհի տարբեր գրադարաններում պահվող հայ հնատիպ և վաղ շրջանի գրքերի, արխիվային փաստաթղթերի, գաղթավայրերում «լքյալ» գրադարանների հաշվառման շուրջ, նոր միտումներ երևան եկան հայրենիք-սփյուռք մշակութային կապերի ամրապնդման ու զարգացման համար. հայ գրքի ու մամուլի ուսումնասիրության նոր նախաձեռնությունների սկիզբ դրվեց: Համաժողովների նյութերը հասանելի են թվային տարբերակով⁸:

2022 թ. «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի մեկնարկին լույս տեսավ նյութերի եռալեզու ժողովածուն, որն ընդգրկում է կազմակերպիչների ու հյուրերի ողջույնի խոսքը, մասնակիցների կենսագրությունները, զեկուցումների ամփոփումները: Սա նոր մշակույթ է ՀԱԳ գրահրատարակչական գործունեության մեջ, և, հուսանք, շարունակական կլինեն թե՛ նմանատիպ ներկայացուցչական գիտաժողովները, և թե՛ նյութերի բարձրաձաշակ հրատարակությունները: Գիտաժողովում հնչած զեկուցումները լույս տեսան 2019 թ. ընդհատված «Բանբեր Հայաստանի գրադարանների» էլեկտրոնային հանդեսի 2023 թ. վերահրատարակված Հատուկ թողարկման մեջ⁹:

Գրադարանի գիտական-մատենագիտական աշխատանքների լավագույն արտահայտություն է կենսամատենագիտությունների կազմումն ու հրատարակությունը: Այն բավական աշխատատար գործ է, պահանջում է բազմակողմանի գիտելիքներ ունեցող, որոնողական հմտությունների տիրապետող մատենագետների և խմբագիրների համատեղ աշխատանք: Վերջին տարիներին կենսամատենագիտությունների նկատմամբ աճել է և՛ գրադարանային աշխատողների, և՛ գիտական հանրության հետաքրքրությունը: Դա բացատրվում է նրանով, որ հետազոտող հանրության մեկ հրատարակության մեջ ներկայացվում են անհատի բոլոր հրատարակությունները, նրա մասին նյութերը, նրա և նրա հետ առնչված անձանց կենսագրական տեղեկությունները, նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում հետևելու անհատի ստեղծագործական ընթացքին՝ պատճառահետևանքային դրսևորումներով: Անհատական մատենագիտությունների կազմման աշխատանքը ստեղծագործական հաճելի և օգտակար աշխատանք է, նոր բացահայտումների ընթացք: Ընդ որում, այդ բացահայտումները վերաբերում են ոչ միայն անհատի կյանքին և գործին, այլև գրադարանային ֆոնդերին, մինչ այդ անհայտ հրատարակությունների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերմանը, գրադարանային ֆոնդերում բացակա գրքերի համալրմանը և այլն: Կենսամատենագիտությունները սովորաբար հրատարակվում են հոբելյանների առիթով: Հոդվածիս քննության ժամանակահատվածում Հայաստանի ազգային գրադարանում լույս տեսան Հովհաննես Թումանյանի, Վարդգես Սուրենյանցի և Եղիշե Չարենցի մատենագիտական ժողովածուները: Այս ժողովածուներում ընդհանուր են կենսամատենագիտական ժողովածուներին հատուկ մոտեցումները. նյութերը դասավորված են ժամանակագրական-այբբենական կարգով, բացված են բո-

⁸ Տե՛ս <https://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html>:

⁹ Բոլոր համարները տե՛ս <https://tert.nla.am/mamul/banbergrad/Table.html>:

վանդակությունները, առկա են օժանդակ ցանկեր, կենսագրական տվյալներ: Թումանյանի կենսամատենագիտությունը ընդգրկում է 2001-2020 թթ. հրապարակումները՝ ստեղծագործությունների ժողովածուներն ու առանձին գրքերով տպագրված գործերը, նրա մասին մենագրությունները, հոդվածները [Հովհաննես Թումանյան, 2020]: Թումանյանագետ, գրքի խմբագիրներից Սուսաննա Հովհաննիսյանը գրքի առաջաբանում անդրադառնում է ՀԱԳ-ի նախորդ Թումանյանի կյանքն ու գործը լուսաբանող մատենագիտական հրատարակությունների աղբյուրագիտական կարևոր նշանակությանը [Հովհաննես Թումանյան, 1961; Հովհաննես Թումանյան, 2009; Հովհաննես Թումանյան, 2008; Ованес Туманян, 2001]: Թումանյանի գրական ժառանգությունը շատ ծավալուն է, և կարոտ՝ մատենագիտական նորանոր ուսումնասիրությունների և հրատարակությունների: «Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն (2001-2020)» հրատարակությունը նրա միայն հայերեն և ռուսերեն նյութերն է ընդգրկում: Ներկայում ընթացքի մեջ է Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված նյութերի մատենագիտական ժողովածուի կազմումը: Ժողովածուն ընդգրկելու է 1969 թ. հրատարակված գրքերը, հոդվածները, նամակները, ասույթները և այլ նյութեր: Համոզված ենք՝ այն մեծ բանաստեղծի գործունեության նոր էջեր կբացահայտի և գիտական շրջանառության մեջ նոր նյութեր դնելու հնարավորություններ կտա:

2010 թ. հայ մեծ գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակի առթիվ գրադարանում նախաձեռնվել և կազմվել էր նրա կենսամատենագիտությունը, որը տարբեր պատճառներով չէր հրատարակվել: Այն նոր նյութերով լրացվելուց (ավելացան նաև հոբելյանական հրապարակումները) և հիմնովին խմբագրվելուց հետո հրատարակվեց 2021 թ.՝ նկարչի ծննդյան 160-ամյակի և մահվան 100-ամյա տարելիցի առիթով [Վարդգես Սուրենյանց, 2021]: Այս մատենագիտությունը կառուցվածքով փոքր-ինչ տարբերվում է մյուս կենսամատենագիտություններից: Ներառված են ոչ միայն Սուրենյանցի կենսագրական տվյալները, նրա մասին հոդվածները, այլև նրա ցուցահանդեսների կատալոգների, ոչ գրքային հրատարակությունների ցանկերը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող նրա արխիվային նյութերը, գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքների, գրքային նկարազարդումների ցանկերը, Հայաստանի ազգային պատկերասրահում և ազգային արխիվում պահպանվող վավերագրերը, նամակները: Այս մատենագիտական աշխատանքը իսկապես կարելի է համարել իրադարձային մեր մշակութային կյանքում, գրականագիտության և արվեստագիտության ոլորտներում և այն, լինելով նմանատիպ առաջին աշխատանք, անփոխարինելի սկզբնաղբյուր կդառնա Վարդգես Սուրենյանցի կյանքն ու գործը հետազոտողների համար:

1954 թ. Եղիշե Չարենցի արդարացումից հետո սկսեցին հրատարակվել և վերահրատարակվել նրա գրքերը, անտիպ երկերը, գրվեցին նրա ստեղծագործության մասին մենագրություններ, ուսումնասիրություններ, գրախոսություններ, գիտական հոդվածներ: Չարենցի երկերի հրատարակությունների և նրա մասին գրականության մատենագիտական ցանկեր կազմելու առաջին փորձը կատարել է Հայաստանի ազգային գրադարանը (Ալ. Մյասնիկյանի անվ. հանրապետական գրադարան): 1957 թ. բանաստեղծի ծննդյան 60-ամյակի առթիվ գրադարանի տեղեկատու-մատենագիտության բաժինը հրատարակել է մատենագիտություն, որում ընդգրկված են միայն հայերեն և ռուսերեն նյութերը (բացառություն են կազմում առանձին գրքերով հրատարակված ուկրաիներեն, քրդերեն, վրացերեն, ադրբեջաներեն նյութերը) [Եղիշե Չարենց. Բիբլիոգրաֆիա, 1957]: Նույն թվականին գրադարանի մեթոդական բաժինը հրատարակում է մեթոդական նյութեր գրադարանների համար: Չարենցի ստեղծագործության մասսայականացմանն ուղղված նյութերից բացի՝ այս հրատարակության մաս է կազմում նաև գրականության հանձնարարական ցանկը [Եղիշե Չարենց, 1957]: Չարենցի ծննդյան 80-ամյակի առթիվ գրադարանը դարձյալ երկու արժեքավոր հրատարակություն է ներկայացնում: Դրանք նախորդ երկու հրատարակությունները լրացնում են ոչ միայն ներառված նյու-

թերի քանակով, այլև նոր նյութերի անդրանիկ հրատարակությամբ՝ նոր հրատարակություններ, լուսանկարներ, ինքնագրերի պատճեններ և այլն [Եղիշե Չարենց-80, 1987; Եղիշե Չարենց, 1987]: Գրողի ծննդյան 100-ամյակի առթիվ նախաձեռնված նոր մատենագիտության հրատարակությունը հնարավոր եղավ իրականացնել միայն 25 տարի անց. 2022 թ. ՀԱԳ-ը հրատարակեց մատենագիտության Ա պրակը [Եղիշե Չարենց, 2022]: Այն ներառում է Չարենցի գրքերը (1914-2022), Չարենցի կազմած, խմբագրած, թարգմանած գրքերը (1922-1935), Չարենցի մասին գրքերը (1924-2022), վերնագրերի և անձնանունների ցանկերը, գրքերի լուսանկարներ: Մատենագիտության կազմման գործընթացում առաջացած խնդիրների մի մասին ընդարձակ անդրադարձը (Երկու խոսք) [Եղիշե Չարենց, 2022, 6-16] հաստատում է այն ճշմարտությունը, որ մատենագիտությունները ոչ միայն համակարգված, որոշակի կառուցվածքով և նպատակով ձևավորվող, որոշակի գիտական, ճանաչողական, քարոզչական արդյունք ակնկալող համահավաք, հանրագումարային հրատարակություններ են: Դրանք նաև հնարավորություն են տալիս պարզելու նախորդ հրատարակություններում առկա անճշտությունները, բացթողումները, վրիպումները, ուսումնասիրելու անթվակիր գրքերի հետ կապված խնդիրները: Մատենագիտությունների կազմման ընթացքում բացահայտվում են հեղինակի գրքերի՝ գրադարանի ֆոնդերում առկայության վիճակագրությունը, այս կամ այն հրատարակության բացակայությունը կամ եզակի օրինակով ներկայացված լինելը, գրքերի ֆիզիկական վիճակը, պահպանվածությունը, մինչ այդ անհայտ հրատարակությունների առկայությունը և այլն: Այստեղ ընդամենը մեկ օրինակ բերենք: Նար-Դոսի «Մահը» վեպը, հրատարակվել է 1934 թ. Հայպետհրատի Մոսկվայի տպարանում՝ առանձին գրքով: Պատասխանատու խմբագիրը Եղիշե Չարենցն է: Վեպը զետեղված է նաև Նար-Դոսի «Երկերի լիակատար ժողովածուի» 4-րդ հատորում. երկու դեպքում բովանդակությունը, ծավալը, էջերի քանակը նույնն է: ՀԱԳ հավաքածուում առանձին հրատարակությունը համարվում էր բացակա: Սակայն պարզեցինք, որ առկա 4-րդ հատորի 7 օրինակներից մեկը իրականում 4-րդ հատորը չէ, այլ առանձին հրատարակություն է, ու թեև շարվածքի ու տառերի չափերը, տպագրական նիշերի քանակները (46,080) նույնն են, երկու հրատարակությունները միմյանցից տարբերվում են կազմի և տիտղոսաթերթի ձևավորման տարրերով: Բացի դրանից, վերջին էջում նշված է նաև տպաքանակը՝ 2000 օրինակ: Սակայն, եթե 4-րդ հատորի 2000 օրինակից 500 օրինակը տպագրվել է Վիշխիմ գրելու և 1500 օրինակը՝ տպագրական թղթի վրա, ապա առանձին հրատարակության 2000 օրինակից Վիշխիմ գրելու թղթի և տպագրական թղթի վրա տպագրվել է հավասարապես 1000-ական օրինակ: Հավանաբար, Չարենցի խմբագրած գրքերի ֆիզիկական վիճակն է եղել պատճառը՝ տիտղոսաթերթերի վնասվածքները, խմբագիրների և մյուս պատասխանատուների անունների ջնջված լինելը և այլն, որ մատենագետները այս օրինակը համարել են 4-րդ հատորի օրինակներից մեկը, և Հայ գրքի մատենագիտության 6-րդ հատորից այն դուրս է մնացել: Ավելին, համեմատելով Խնկո Ապոր անվան մանկական գրադարանի և Մատենադարանի օրինակները՝ արձանագրում ենք, որ դրանք ևս տարբերվում են կազմի ձևավորման տարրերով. ազգային գրադարանի օրինակի կազմին գինը նշված է 6 ռ. 70 կ., իսկ վերը նշված գրադարանների օրինակներին՝ նշված է գինը՝ 6 ռ., կազմը՝ 1 ռ.: Երեք օրինակներն էլ տարբերվում են կազմերի գույներով: Սրանք փաստեր են, որոնք կարող են հետաքրքիր ուսումնասիրության նյութեր դառնալ թե՛ Նար-Դոսի գրական ժառանգության, թե՛ հայկական գրահրատարակչության պատմության, կազմարարական արվեստի ուսումնասիրության համար: Մատենագիտական աշխատանքին զուգահեռ կատարվում է նաև վերոնշյալ խնդիրների կարգավորման հետ կապված կարիքների գնահատում, խնդիրների ու ռիսկերի արձանագրում, տրվում են ընթացիկ լուծումներ: Կենսամատենագիտությունները տվյալ անհատի, նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի վայրիվերումների, հանրային տրամադրությունների վավերական պատմություններ են, իրողություններ, որոնց արձանագրումն ու նույնականացումն ապահովում են մատենագետները:

ՀԱԳ-ում ձևավորվում է մատենագիտական հրատարակությունների նոր մշակույթ. թողարկման է պատրաստվում Չարենցի մատենագիտության էլեկտրոնային տարբերակը, որը ոչ թե մատենագիտության տպագիր տարբերակի պատճենն է, այլ թվածին գիրք՝ նոր միջազգային հաշվառանիշով (ISBN), օպտիկական նիշերի ճանաչման գործընթաց անցած, վերանայված և լրամշակված հրատարակություն: Չարենցի գործերում առանձնակի տեղ են գրավում բնաբանները: Դրանք համարվում են ստեղծագործությունը կարդալու գիտության կարևոր բաղադրիչ: Էպիգրաֆ-բնաբանը ոչ միայն բանաստեղծության մուտքի դուռը զարդարող գեղեցիկ ցուցանակ է, այլև հուշարարություն-թելադրանք, բանաստեղծական ավանդույթները, մշակութային շերտերը իրար կամրջող իրողություն [Գրիգորյան, 1994, 2]: Հենց առաջին բանաստեղծական «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքին որպես բնաբան Չարենցը կցել է ֆրանսիացի բանաստեղծ Ալբեր Սամենի տողերը: Եղիշե Չարենցի մատենագիտության թվածին հրատարակության մեջ տեղ կգտնեն բնաբանների և մատենաշարերի ցանկերը: Բնաբանների ցանկում առկա է Բլոկի, Տերյանի, Սիամանթոյի, Տյուտչևի, Պուշկինի և այլ հեղինակների մոտ քառասուն բնաբան: Պակաս կարևոր չեն նաև մատենաշարերը, որոնցով հրատարակվել են Չարենցի երկերը, նրա կազմած, խմբագրած, նրա մասին գրքերը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հայերեն, ռուսերեն, չեխերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով հրատարակությունների մեջ գերակշռում է «Պետհրատի էժանագին գրադարան» մատենաշարով լույս տեսած գրքերի թիվը: Եղիշե Չարենցի մատենագիտության Ա պրակը առանձնանում է պոլիգրաֆիական բարձրաճաշակ ձևավորմամբ: Օգտագործված է նրա Երկերի 1932 թ. հրատարակության՝ Տաճատ Խաչվանքյանի ձևավորումը: Գրքի կոշտ կազմը, կրկնակազմը, գունաբաշխումը, էջերի ակնահաճո ձևավորումը առավել տպավորիչ են դարձնում այս հրատարակությունը:

Այսպիսով, Հայաստանի ազգային գրադարանի վերջին հինգ տարիների հրատարակությունները գալիս են վերահաստատելու այն իրողությունը, որ գրադարանը իրապես ապահովում է մատենագիտական, մեթոդական ձեռնարկների կազմման և հրատարակության 85-ամյա ավանդույթների շարունակականությունը և հայկական գրահրատարակչական դաշտում ամրագրել է իր տեղն ու անշփոթելի ձեռագիրը: Միաժամանակ ուսումնասիրվում և օգտագործվում են մատենագիտությունների կազմման և հրատարակման աշխատանքներում արտերկրի գրադարանների առաջավոր և նորարար մոտեցումները, հրատարակությունների ձևավորման ժամանակակից մեթոդներն ու նյութերը: Ներկայում նախապատրաստական աշխատանքներ են տարվում գրադարանի տարբեր հավաքածուները ներկայացնող գիրք-ալբոմների շարքի հրատարակության ուղղությամբ:

SUMMARY

The publications of the National Library of Armenia for the last five years have come to reaffirm the fact that the library actually ensures the continuity of the 85-year-old tradition of compiling and publishing bibliographical and methodological manuals and has secured its place and unmistakable handwriting in the Armenian publishing field. At the same time, advanced and innovative approaches of foreign libraries, modern methods and materials for creating publications are studied and used in compiling and publishing bibliographies. Currently, preparations are being made for the publication of a series of book-albums representing the various collections of the library.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտական ցանկ, Հատոր II, 1931-1940 = Книга в Советской Армении: Библиографический указатель / Մասնագիտական խմբ.՝ Ռ. Իշխանյան, Կազմ.՝ Լ. Ղազարյան, Թ. Մարգարյան, Երևան, ՀՍՍՀ պետական գրապատ, 1988, 953 էջ:

2. Գրիգորյան Ս. «Զքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեն» // Գրական թերթ, 1994, թ. 2, 25 մարտի, էջ 2:
3. Եղիշե Չարենց (1897-1937): Բիբլիոգրաֆիա, Երևան, Հայկ. ՍՍՌ պետ. ռեսպ. գրադարան, 1957, 95 էջ:
4. Եղիշե Չարենց: (Ծննդյան 60-ամյակի առթիվ): 1897-1957, Երևան, Հայկ. ՍՍՌ պետ. ռեսպ. գրադարան, 1957, 65 էջ:
5. Եղիշե Չարենց: Ծննդյան 80-ամյակը: (Մեթոդական ցուցումներ գրադարանավարների համար), Երևան, Հայկ. ՍՍՀ հանրապետ. գրադարան, 1977, 134 էջ:
6. Եղիշե Չարենց-80: Տարեգրություն, մատենագիտություն, ասույթներ, Երևան, Սովետ. գրող, 1977, 79 էջ:
7. Եղիշե Չարենց: Մատենագիտություն (1914-2022): Պրակ Ա. / Կազմ.՝ ՀԱԳ մատենագիտության և գրադարանագիտության բաժին, Գլխ. խմբ. և առաջաբ. հեղ.՝ Դ. Գասպարյան, Պատ. խմբ. և առաջաբ. հեղ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2023, 448 էջ:
8. Զարգարյան Տ., Ղազարյան Հ., Գրիգորյան Մ. Հայ տպագիր ժառանգությունը պատմության հոլովույթում // Կաճառ, Երևան, 2017, էջ 459-470:
9. Հայ գիրքը Թուրքիայում = Türkiye'de Ermeni kitabı, Պրակ Ա. / Կազմ.՝ Ա. Վարդանյան, Խմբ. և առաջաբ. հեղ.՝ Տ. Զարգարյան, Մ. Գրիգորյան, Երևան, Անտարես, 2022, 514 էջ:
10. Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն / Կազմ.՝ Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1988, 864 էջ:
11. Հայ գիրքը 1801-1850 թվականներին / Կազմ.՝ Հայկ Դավթյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1967, 536 էջ:
12. Հայ գիրքը 1851-1900 թվականներին / Կազմ.՝ Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Օ. Գյուլումյան, Ա. Սահակյան, Ս. Թադևոսյան, Երևան, Գիրք, 1999, 860 էջ:
13. Հայ գիրքը 1901-1920 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ա. Թադևոսյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Ա. Սահակյան, Երևան, Գիրք, 2007, 818 էջ:
14. Հայ գիրքը 1921-1930 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2012, 788 էջ:
15. Հայ գիրքը 1931-1940 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2018, 928 էջ:
16. Հայ թարգմանական գրականություն (1911-2020): Մատենագիտություն: Գիրք Գ. / Կազմ.՝ Թ. Սինանյան, Ա. Ներսեսյան, Կ. Ասատրյան, Խմբ. և թող. պատասխանատու՝ Մ. Հակոբջանյան, Երևան, Գիրք, 2021, 252 էջ:
17. Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի: Ազդարար 225: Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28-29 նոյեմբերի 2019թ.) / Կազմ.՝ Հ. Ղազարյան; Խմբ.՝ Ա. Խառատյան, Երևան, Գիրք, 2020, 317 էջ:
18. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն (2001-2020) / Կազմ.՝ Ա. Ամիրջանյան, Օ. Աղայան; Խմբ.՝ Ս. Հովհաննիսյան, Մ. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2020, 443 էջ:
19. Հովհաննես Թումանյան (1869-1923): Մատենագիտություն / Խմբ. և առաջաբ.՝ Էդ. Ջրբաշյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1961, 386 էջ:
20. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն 1980-1989 թթ. / Կազմ.՝ Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2009, 216 էջ:
21. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն 1990-2000 թթ. / Կազմ.՝ Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2008- 2009, Մ. I (2008, 278 էջ), Մ. II (2009, 216 էջ):

22. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. Հրատարակությունների մատենագիտություն 1772-1920 / Կազմ.՝ Մ. Գրիգորյան, Ս. Պետոյան, Գ. Գրիգորյան և ուրիշն.; Պատ. խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 2021, 744 էջ:
23. Նորահայտ գրքեր և պարբերականներ: Պրակ Ա. / Կազմ.՝ Ս. Պետոյան, Ռ. Ալեքսանյան; Խմբ.՝ Տ. Զարգարյան, Հ. Ղազարյան, Մ. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2018, 128 էջ:
24. Վարդգես Սուրենյանց: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ա. Աղամյան; Խմբ.՝ Դ. Մկր. Սարգսյան, Երևան, Գիրք, 2021, 170 էջ:
25. Տեր Վարդանեան Գ. Ստորումներ հայերեն տպագիր գրքի տեղային մատենագիտությունների մասին // Բանբեր Մատենադարանի, Երևան, Հտ. 28, 2019, էջ 218-243:
26. Տպագրության տարեգիր, Երևան, Գրապալատ, 1925-1994:
27. Ованес Туманян (1869-1923): Библиография / Сост. Э. Бабалян; Ред. И. Сафразбекян, Ереван, Гирк, 2001, 162 с.
28. Справочник библиографа. СПб., Профессия, 2005, 592 с.